

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՔՈԼԵՃԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 85-ԱՄԵԱԿԻ ՀԱՆԴԻՍԱԻՈՐ ՆՇՈՒՄ

(նկար՝ Ժանեթ Քասունի)

Հովանավորությամբ Մերձավոր Արեւելքի Հայ աւետարանական եկեղեցիներու միութեան (ՄԱՀԱԵՄ) երէկ՝ կիրակի, 19 հոկտեմբեր 2008-ի երեկոյեան



Ժամը 6:00-ին, ԵՈՒՆԵՍԲՕ-ի պալատի հանդիսարանին մէջ տեղի ունեցաւ Հայ աւետարանական քոլեճի հիմնադրութեան 85-ամեակի յոբելեանական հանդիսութիւնը (85th Anniversary of the Armenian Evangelical College):

Լիբանանի եւ Հայաստանի զոյգ քայլերգներու ունկնդրութենէն ետք Հայ աւետարանական քոլեճի հոգաբարձութեան ատենապետ դոկտ. Արտա Էքմեքճի արաբերէնով եւ հայերէնով բարի գալուստ մաղթեց ներկաներուն: Ան հաստատեց, թէ Հայ աւետարանական քոլեճը, որ հիմնադրուած է 1923-ին, եղած է Սփիւռքի յետ եղեռնեան առաջին աւետարանական վարժարանը եւ հակառակ Լիբանանի մէջ տեւած դժուար կացութիւններուն, քաղաքացիական պատերազմին եւ իսրայէլեան յարձակումներուն, քոլեճը անընդհատ շարունակած է իր կրթական առաքելութիւնը եւ ցարդ ունեցած է աւելի քան 1500 շրջանաւարտ:

Դոկտ. Ա. Էքմեքճի նկատել տուաւ, որ սոյն ձեռնարկը յատուկ է այն իմաստով, որ բոլոր դասախօսները եւ գեղարուեստական յայտագիրին մասնակցողները կը պատկանին Հայ աւետարանական քոլեճի մեծ ընտանիքին: Այնուհետեւ ան հրաւիրեց Հայ աւետարանական Ա. եկեղեցւոյ հովիւ վեր. Յակոբ Սարգիսեանը, որ աղօթքով շարունակէ հանդիսութիւնը:

Օրուան բանասխօսն էր Ամերիկայէն հրաւիրուած վաստակաւոր կրթական մշակ Ժանեթ Քասունի: Ան վկայեց, որ ինք ականատես եղած է վարժարանի աւետարանական առաքելութեան, անոր հոգեւոր, բարոյական եւ ընտիր դաստիարակութեան: Ան յայտնեց, որ Կիլիկիոյ մէջ սկսած հայ աւետարանականութեան առաջադրած բարեկարգութիւնը՝ եկեղեցական եւ կրթական կեանքին մէջ, կանգ չառաւ Եղեռնով: Այդ բարեկարգչական շարժումը շարունակեց իր սրբազան առաքելութիւնը Լիբանանի մէջ, ուր առաջին առիթով կառուցուեցան եկեղեցիներ եւ կրթական օճախներ:

Ան նկատել տուաւ, որ 1923-ին հիմնուած Հայ աւետարանական քոլեճի 1500-է աւելի շրջանաւարտները աշխարհի չորս կողմերը Եղեռնի՝ իրենց նախնիներուն պատճառած դառն վերքերը կը դարմանեն: «Հայ աւետարանական քոլեճը հարազատ գաւակն է հայ աւետարանականութեան եւ հետեւած է հիմնադիր եկեղեցիի հաւատամքին», շեշտեց Ժ. Քասունի՝ աւելցնելով, որ իր հիմնադրութեան առաջին օրէն իսկ քոլեճը հետեւած է ժամանակներու պահանջին՝ միշտ բարեփոխութիւններով, որոնք քոլեճը հասցուցած են իր առաքելութեան բարձունքին: «Թող յաղթական երթով ընթանայ հայ աւետարանական առաքելութիւնը եւ անմար մնայ անոր վարած մէկ փարոսին լոյսը՝ Հայ աւետարանական քոլեճը», նշեց Ժ. Քասունի:

Քոլեճի վաստակաւոր ուսուցիչ դոկտ. Ապպաս Քասեմ խօսք առնելով շնորհաւորեց քոլեճի 85-ամեակը՝ մաղթելով, որ ան յարատեւ է իր առաքելութեան մէջ:

Այնուհետեւ դոկտ. Արտաւ Էքմեքճի հրաւիրեց ՄԱՀԱԵՄ-ի Կեդրոնական մարմինի ատենապետ եւ Հայկազեան համալսարանի նախագահ վեր. դոկտ. Փոլ Հայտոյթեանը, որպէսզի քոլեճի հոգաբարձութեան անունով յուշատախտակ մը յանձնէ 41 տարիէ ի վեր քոլեճի տնօրէն դոկտ. Զաւէն Մարդեանին, որ իր կարգին խօսք առնելով շնորհակալութիւն յայտնեց յուշանուէրին համար եւ ամփոփ կէտերու մէջ ներկայացուց քոլեճի պատմութիւնը՝ շեշտելով, որ քոլեճը իր հիմնադրութեան առաջին օրէն հետամուտ եղած է հայկական եւ քրիստոնէական դաստիարակութեան՝ բարձրագոյն եւ որակաւոր ուսման կողքին:

«Մեր կրթարանը այս բոլորը ըրած է հաւատքով, նուիրումով եւ գոհողութեան ոգիով», ընդգծեց դոկտ. Զաւէն Մսրրլեան՝ աւելցնելով, որ քոլեճը անցեալին նայող եւ միայն անցեալով հպարտացող հաստատութիւն մը չէ, այլ եւ՝ կրթական կեդրոն մը, որ կը նայի ներկային եւ ապագային՝ կենսունակ հոգիով, նորանոր նուաճումներ արձանագրելու բնական ձգտումով:

ՄԱՀԱԵՄ-ի անունով վեր. դոկտ. Փոլ Հայտոյթեան նկատել տուաւ, որ Հայ աւետարանական քոլեճի 85-րդ յոբելեանը սոնակատարութիւն կը դառնայ՝ բարձրորակ թարգմանը հանդիսանալով հայ ժողովուրդի վերածնունդին եւ միաժամանակ ՄԱՀԱԵՄ-ի կրթական առաքելութեան գործին ու շեշտին:

Հանդիսութիւնը փակուեցաւ Էշրեֆիէի Հայ աւետարանական եկեղեցւոյ հովիւ վեր. Սողոմոն Քիլաղպեանի օրհնութեան աղօթքով:

Ձեռնարկի ընթացքին գեղարուեստական յայտագիրին իրենց մասնակցութիւնը բերին Կարօ Աւեսեան՝ նուագ (դաշնակ), Զուիցերիայէն յատկապէս հրաւիրուած երգչուհի Լենա Քիւրքճեան, Շուշան Արթինեան՝ թափառութեամբ, Անի Պալապանեան՝ դաշնակ: Գեղարուեստական յայտագիրին իր մասնակցութիւնը բերաւ նաեւ Հայ աւետարանական քոլեճի երգչախումբը՝ ղեկավարութեամբ Նելտար Փալազեանի, դաշնակի ընկերակցութեամբ Մարիա Փալազեանի: Տուցադրուեցաւ նաեւ Հայ աւետարանական քոլեճի պատմութիւնը ներկայացնող տեսաերիզ մը՝ պատրաստութեամբ Շուշան Արթինեանի:

Ազդակ